31178

Նուէր [illegible] Մատենադարանին
[illegible]

Ստամբուլ, 15 Ապրիլ 1971 [illegible]

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲՈՅ

## ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ։

Յամ Տն. 1809։

Ի ՎԵՆԵՏԻԿ։

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ։

31178

[illegible] 1970 [illegible]

ՄԱՏՆԱԴԱՐԱՆ

Յաւանդատան ընդ հարցն առաջին պահոց , տօնից պերճաշնորհանաց , և ամենայն սրբոց :

## Պահոց :

Որ 'ի Հօրէ առաքեցար փրկիչ և մարմնացար 'ի սբ կուսէն . որ վն մեր 'ի յերկնից իջեր՝ և լուսաւորեցեր զտիեզերս . զխաղաղութիւն քո տուր մեզ տր . որ խաղաղութեանց ես թագաւոր . զխաղաղութիւն , և զողորմութիւն . որ յամի ես դու կարող՝ մարդասէր :

## Զօրհնաբանեա . և Ողորմեա :

Որ ը ամ միոս անցանես . զխաղաղութիւն քո աձ՝ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք :

## Մարտիրոսաց :

Ի տաճարի սրբոց , և յիշատակի սբց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք , բարեխօսութբ սոցա և աղօթիւք ըդ կենդանութիւս մեր խաղաղացո տր , որպս մարդասէր :

## Ճգնաւորաց :

Ճգնաւորք քո որք տանջանաց անօրինացն համբերեցիք . և զմոլութիւն կռոցն խափանեցիք , դասաւորեալք ը հրեշտակս 'ի յերկինս . որք ունիք զհամարձակութիւն 'ի քսէ , բարեխօսեցէ՛ք կեցուցանել զանձինս մեր . զձեզ աղաչեմք :

## Կիւրակէի :

Միածին որդի և բանդ հօր , և անմահ էութիւն . որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ աստուածածնէն և 'ի միշտ կուսէն . անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար քս աձ . մահուամբդ զմահ կոխեցեր . մինդ 'ի սբյ երրորդութենէն փառաւորակից ընդ հօր և ընդ սբյ հոգւոյն . կեցո զմեզ :

## Ստեփաննոսի :

Ցնծա՛ այսօր՝ ցնծա՛ և զուարճացի՛ր կաթուղիկէ՛ սբ՝ յիշատակաւ սրբոյն ստեփաննոսի նախավկային քո՝ վկայեցելոյ հօր . որ աղօթիւք բանայր զերկինս , զոր փակեաց ադամ . և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի կերպի ադամայ նստեալ յաթոռ փառաց . որ զբազմութիւն քարանցն ոպ զծաղիկս հաւաքելով բոլորեր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն : Եւ զմարտիրոսական արիւնն խառնէր ը փրկական արեանն քո հոսեցելոյն 'ի կողէն : Որ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամ սբս՝ հայցեա՛ և մեզ 'ի վերնատունն զպարգեւս կենաց անվախճանից՝ և զմեծ ողորմութիւն :

## Ստեփաննոսի :

Յորովայնէ ընտրեալ՝ սբ ստեփաննոս , յորովայնէ ընտրեալ՝ սբ ստեփաննոս , վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեան . որ 'ի վր անօրէն քարաձգողացն աղօթէիր առ քս աձ՝ մի համարիր սց զայս 'ի մեղս . 'ի ձեռն սորին բարեխօսութեան շնորհեա՛ մեզ զմեծ քո ողորմութիւն .

## Ծննդեան :

Ածածին անհարսնացեալ , զբանն անըսկիզբն յղացար , և զաձն անժամանակ ծնար . զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր , նմա անդադար բարեխօսեա՛ վն անձանց մերոց :

## Ծննդեան :

Ածածին զքեզ խոստովանեմք երկրպագուքս եկեղեցի ուղղափառաց , քանզի ուր քերովբէքն բազմաչեայք , և աթոռք հրանիւթք և վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին , կրեցեր անսերմնաբար յանապականութեն 'ի յարգանդի քում որպէս աղախին զտր , և ծնար ոպ մարդ զաձն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն՝ զանձառ զբանն , 'ի փրկութիւն աշխարհի և կեանս անձանց մերոց .

Ծնն

### Ծննդեան ։

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին. բարձրելոյն զօրութեամբ հովանաւորեալ, և սուրբ հոգւոյն եկամուտութեամբ լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր ։

### Մեծացուսցէ ։

Ծերունին այսօր Սիմէովն, հոգւովն գայր 'ի տաճարն. երևելով քերովբէից վեհագոյն. որոց թևօքն սաւառնեն ոչ իշխէին նայել 'ի յահեղ փառացն. սա 'ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս. և գգուէր զմանուկ. և աղերսելով հայցէր արձակել 'ի խաղաղութեան ։

### Տեառն ընդառաջին ։

Անսկզբնական բանդ Աստուած 'ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ 'ի կուսէն, և արարիչդ յաւիտենից փոքրկացար ընդ ժամանակաւ, սուրբ տէր սրբութեանց, և անկարօտ մաքրութեանց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ զօրինացն կատարեցեր զարդարութիւն. զոր բարձեալ Սիմէովնի զանպարագրելիդ 'ի գիրկս իւր՝ հայցէր. որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս 'ի խաղաղութիւն ։ Արդ որոյ ընդ ծերունւոյն Սիմէովնի վերագոչեմք առ քեզ տէր. սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո 'ի փրկութիւն մեզ՝ Քրիստոս Աստուած. փառք քեզ ։

### Զօրականաց ։

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի սուրբդ Թէոդորոս. որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս. և ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի թագաւորին. այլ վերին ազդեցութեամբն, դիտելով զայրեցուածս հոգւոց նոցա. վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա. Արդ՝ 'ի յաղթօղ պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ տէր վասն անձանց մերոց ։

### Քառասուն մանկանց մարտիրոսաց ։

Գնալով փառաց քոց 'ի փառս՝ կաթուղիկէ եկեղեցի, դիմեմք 'ի Սեբաստիա վերին. ուր թագաւորեալքն յոյժ նահատակին 'ի յամօթ և 'ի քարընկէց յերեսս բանսարկուին. քաջալերելով զմիմեանս, զի մի լուծեալ ոք բազմնեօք անցաւորիս՝ պակասեսցի. այլ գոչելով առաքինաբար զինքն ըղերձեալ յանխուս Աստուածային գանձուցն հոլովեսցի, աղաղակելով առ Քրիստոս, ընկալ զորդեգրութիւն ժողովույս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց. տէր փառք քեզ ։

### Ղազարու ։

Զղազարու զննջումն տէր կանխագէտ յառաջ ասէիր. զի և 'ի Բեթանիայ յառաջէիր. զի յարուցես զսիրելին քո. և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ հօր 'ի փրկութիւն անձանց մերոց ։

### Ղազարու ։

Յորժամ եկեր կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով. Ղազարէ արի եկ արտաքս ։ Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութեան պարգևեալ ետ սիրելւոյն. և Աստուածային ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց. վասն որոյ և մանկունք եբրայեցւոց՝ ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն 'ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ տեառն ։

### Ծաղկազարդին ։

Ցնծա Երուսաղէմ, և զարդարեա զառագաստ քո Սիովն. զի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ 'ի յաւանակի նորոյ հեծութեան ցուցանելով և գայ մտանէ յառագաստ քո Սիովն, և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն տեառն. որ ունի զմեծ ողորմութիւն ։

### Զատկին ։

Քն յարեաւ ՚ի մեռելոց ․ մահուամբ զմահ կոխեաց , և յարութբ իւրով մեզ կեանս պարգևեաց ․ նմա փառք յաւիտեանս ամէն ։

### Յինանցն ։

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութե մերոյ ․ որ անսկիզբն ՚ի հօրէ անճառաբար մարմնացաւ ՚ի կուսէն , խաչի համբերելով , և կամաւոր մահուամբ իւրով ընդ կենդանութե մեզ պարգևեաց շնորհս ։

### Յինանցն ։

Քանզի յարեաւ ՚ի մեռելոց քս Ած յաւիտենից արարիչ , և յարութի ազգի մարդկան ․ զոր օրհնեն անդադար զխնոճորութիւք հրեշտակաց ․ և Տմ զօրութիւնք երկնից ․ ընդ որս գոչելով ասեմք ․ փառք սոսկալի յարութե քո Տր ։

### Համբարձման ։

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ ՚ի հրեղէն կառս բազմեալ սարսեալ ասէին , ո՛վ է սա՝ որ զգեցեալ գայ յեդովմայ , և եկեալ մտանէ փառօք ՚ի փառս ․ տէր փառք քեզ ։

### Համբարձման ։

Որ յանպատում յաթոռ նստիս՝ և յանմարմնոց վերօրհնիս , անհասանելի բանդ Ած , ՚ի յերկրի երևեցար ճշմրիտ մրդ՝ զտնօրէնութեն կատարեալ զխորհուրդ ․ խաչի և մահու համբերեցեր ․ և զհրաշալի զյարութիւդ քո ցուցեր հզօր զօրութբ ․ այսօր համբարձար փառօք ՚ի յերկինս , և զկուսածին զմարմինդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր ․ զոր տեսեալ եսայիաս՝ նախաձայնեալ ասէր , ո՛վ է սա՝ որ զգեցեալ գայ յերկրէ ․ հիացեալ պետութեց երկնից՝ գոչէին առ միմեանս ․ համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր , և մտցէ թագաւոր փառաց ։ Արդ որ յանի կարօղդ ես՝ և հզօր , շնորհեա՛ և մեզ հանդիպիլ քեզ ամպովք՝ ՚ի միւսանգամ քո գալստեանդ ․ որ միայնդ ես մարդասէր ։

### Հոգւոյ գալստեան ։

Ա՛ծ զքեզ խոստովանիմք զՏր հոգիդ՝ և երկրպագանեմք ․ որ ես պատճառ կենդանութե եղելոցս՝ և խաղաղարար աշխարհի ․ որ զորդխութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր ․ և ՚ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցար նոցա ․ աղաղակեմք Տր , խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

### Երկուշաբթի ։

Այսօր ՚ի հրեղէն լեզուս բաժանեալ հանդերձ յառաքեալսն լուսաւորելով զնոսա ․ և այժմ աղաչեմք զքեզ Տր Ած՝ որ ես պատճառ կենդանութե եղելոցս և խաղաղարար աշխարհի ․ խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

### Երեքշաբթի ։

Այս և մեք զհոգին Տր ընդ հօր միաւորեալ ․ և ը որդւոյ միասնական խոստովանիմք ․ և հայցեմք ՚ի վերնատուողէդ մեզ զհոգևորական զխաղաղութիւն ․ Տր փառք քեզ ։

### Հռիփսիմեանց ։

Որք ծագեցան մեզ յարևմտից ո՛չ զարեգակն ․ և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայաստանեայց , փարատեցին զխաւարն անգիտութե կռապաշտութե ․ և լուսաւորեցին զԱմ հոգի հաւատով Ածգիտութե ․ սոցա բարեխօսութբն քո Ած , պարգևեա՛ աշխարհի քում զխաղաղութի ․ և անձանց մերոց զմեղաց զթողութի , ո՛վ մարդասէր Տր ։

### Գայիանեանց ։

Զյաղթական զձեր զհանդէս զօ՛րարձացեալ տօնէ եկեղեցի Տր ․ Քզի սրբութբ ստացայք զկուսութի ․ և ՚ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս ։

Կուսանաց ։

Զարմանացեալք քսի երկնաւոր փեսային, դստերք վերին սիոնի . խնդրեցէք 'ի քսէ զհաշտութիւն և զմեծ զողորմութիւն ։

Յովհաննու Մկրտչին ։

Զյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն ոյ բանին խափանել կարծելով . որ 'ի ձեռն կնոջն զնախաստեղծն 'ի դրախտէն արտաքս ընկէց, նաև այժմ զհերովդիադայ անօրէնութբ բորբոքեալ, և բազմելոցն հերովդիայ՝ զկաքաւս ուսից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ . որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զքն ։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ որում ձեռնադրեցեր . պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն ։

Մարգարէից ։

Տէր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վր վիմին հաւատոյ, և կարգեցեր 'ի սմա առաքեալս՝ և մարգարէս . հովիւս և վարդապետս առ 'ի հաստատութիւն սրբոց . և ճգնութբ վկայից զթշնամին սորա վանեցեր . 'ի խաղաղութե զսա պահեա՛ ած որպէս մարդասէր ։

Առաքելոց ։

Առաքեալք և վկայք քսի ոյ ամենակալ հոգւոյն զօրութբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութե կենաց կոչելով՝ միաւնական որ երրորդութեն յորդորեցին երգել զփառս 'ի յաւիտեանս . ամէն ։

Հայրապետաց ։

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ 'ի յերկրի . առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ քսի ով երանելիդ 'ի հարս որ հայրապետ . քանզի քոյ վարդապետութեդ սերմանք՝ բարեպաշտութե բուսուցին հասկս, ուրախութե պտուղ հասուցանելով . և հաւատացելոցս զփրկութի շնորհելով . վսյ բարեխօսեա՛ առ որ վն անձանց մերոց ։

Եկեղեցւոյ ։

Զխաղաղութեան շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ . զխաղաղութի և զանշարժութի 'ի թշնամեաց պատերազմէ . և հաստատեա՛ 'ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի . զքեզ խոստովանիմք տր և ած՝ կեցո՛ զմեզ ։

Վարդավառին ։

Երևի տր այսօր աշակերտացն 'ի Թաբօրական լերինն . և աշակերտացն զարհուրեալ աղաղակելին ասելով, արասցուք երիս տաղաւարս . մի տն, և մի մովսէսի, և մի եղիայի ։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիցդ . առաքեա՛ 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո՛ ։

Խաչի ։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութի յանցանաց մերոց . քանզի սովաւ բարձեր զդատապարտութի ազգի մարդկան ։ Եւ այժմ վն սբյ ածային քոյ նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւնդ ամ աշխարհի ։

Որդւոյն որոտման ։

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին 'ի յերկնից 'ի յերկիր կոչելով յորդեգրութի զձեզ որդիք սիովնի . հաստատութի հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ . որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զոխեղերս յանօրէն կռապաշտութեց ։ Արդ՝ հայցեցէք 'ի քսէ զքաւութի տօնողացս անուան ձերոյ, մաղթանօք սոցա տր խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայնդ ես մարդասէր ։

Հրեշտակաց ։

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նախապետութիւնք՝ հրեշտակք՝ և հրեշտակապետք, աթոռք՝ և տէրութիւնք, իշխանութիւնք՝ և պետու-

տութի՛ք , սերովբէք՝ և քերովբէք զամենա՛մբ զերրորդութիւնն , և զմի՛ ա՛ծութիւն ։

Հրեշտակաց ։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քհանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութե՛ տօնս , անմարմնական դասուց հոգեղինացդ՝ մարմնականքս և հողեղէնքս , ո՛վ սբ գաբրիէլ և միքայէլ մեծք , հրեշտակապետք բարձրելոյն , որք կայք առաջի աթոռոյ ա՛ծուե՛ն · անդադար բարեխօս լերուք վասն մեր առ տէր , վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութի՛ն , և միաձայն բարբառով երգել զփառս ։

Գրիգորի լուսաւորչին ։

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր · և զբանակս դիւացն հալածեցեր · մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութի՛ն · պսակեցար յարքայութե՛ն · արդ՝ բարեխօ՛ս լեր առ տ՛ր վասն մեր ։

Նորոց մանկանցն ։

Որ 'ի վե՛ր քերովբէիցն հանգչիս · և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս , իջեր 'ի բաբելոն և փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բռնուե՛ · որք աղաղակելով գոչէին երգ նոր , ա՛մ գործք օրհնեցէք և բարձր արարէք ։ Թագաւոր փառաց ք՛ս և արարիչ բոլորից · որ մարդասիրապէս գթացար 'ի սբ մանկունսն , փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն · որք անարգեցին զբռնութի՛ թագաւորին , և շիջուցին զզօրութի՛ հրոյն · ը՛ նոսին և մեք քեզ վերագոչեմք , փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից ։ Օ՛լ դու միայն ես բազմագութ տէր՝ քեզ փառք յաւիտեանս ամէն ։



# ՕՐՀՆՈՒԹ ԱՐԿԱՆԵԼՈՅ

## ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար սրբագործել։

Մտցէ յաւանդատունն, հանդերձ սարկաւագօքն, որք սրբեալքն են պատարագի։ Եւ սրբեցեալ պաշտօնէիցն ըստ նուիրականի իւր աստիճանի. ասասցեն ապա սաղմոս. ճլա. Սկսի։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սրբք քո ցնծալով ցնծասցեն։

Տուն։

Յիշեա տէր զդաւիթ, և զամ հեզութիւն նորա։
Որպ երդուաւ տն. և ուխտեաց աստուծոյ յակոբայ։
Եթէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։
Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտևանաց իմոց, կամ հանգիստ ծնօտից իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն այ յակովբայ։
Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։
Մտցուք 'ի յարկս նորա. երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։
Արի տր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութե քոյ։
Երիցունք քո զգեցցին զարդարութիւն. և սրբք քո ցնծալով ցնծասցեն։
Վսն դաւթի ծառայի քոյ. մի դարձուցա-ներ զերեսս քո յօծելոյ քումմէ։
Երդուաւ տէր դաւթի ճշմարտութբ և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնէ քումմէ նստուցից յաթոռ քո։
Թէ պահեսցեն որդիք քո զուխտս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։
Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտե-նից յաթոռ քո։
Զի ընտրեաց տէր զսիոն. և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակե-ցայց՝ զի հաճեցայ ընդ սա։
Զորս սորա օրհնելով օրհնեցից, և զաղ-քատս սորա լցուցից հացիւ։
Քահանայից սր զգեցուցից զփրկութիւն. և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։
Անդ ծագեցից զեղջիւր դաւթի պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ։
Թշնամեաց նր զգեցուցից զամօթ, այլ 'ի վր նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Եւս խաղաղութե զտր։
Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի տնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Տր ամենակալ կե-ցուսցէ և ողորմեսցի։
Կեցո տր։
Ողորմեաց մեզ տր մեր ըստ մեծի ողորմուե քում ասասցուք ամքն միաբանուք։

Եւ ասասցեն երկոտասան՝ Տր ողորմեա։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհան-դերձ տր մեր յիսուս քս. անճառելի խոնարհութբ 'ի յերկրի երևեցար, և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քա-հանայապետ յաւիտենից ըստ կարգին մել-քիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։ Տր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ, և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փա-ռաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտու-թիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութե, և զարդարեցայց լուսով քով։

Ըն

Ընկեա՛ յինէն զչարիս իմ . և Թօթափեա՛ զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց համարձակելոյ լուսոյդ առ 'ի քէն : Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել 'ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո : Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ ք͞ս որ բարձեր զմեղս ամենեցուն : զի դու ես սրբութիւն անձանց մերոց : Եւ քեզ բարերարիդ ա͞յ վայել է փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ապա մատուցեալ սարկաւագունքն զգեցուցանեն նմա զհանդերձսն աղօթելով :

Ապա դնէ յառաջ զխոյրն 'ի գլուխն, և ասասցէ :

Դնէ՛ Տէր սաղաւարտ փրկութեան 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւն Թշնամւոյն : Շնորհօք Տեառն մերոյ յ͞ի ք͞ի, որում վայել է փառք, իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Շապկին :

Զգեցո՛ ինձ Տ͞ր հանդերձ փրկութեան, և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա՛ զգեստուն փրկութեան : Շնորհօք Տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի :

Գօտւոյն :

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս, և շիջուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս : Եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ 'ի սոսա : Շնորհօք Տեառն մերոյ յ͞ի ք͞ի :

Բազպանին :

Տո՛ւր Տ͞ր զօրութիւն ձեռին իմոյ, և լուա՛ զա͞մ աղտեղութիւնս իմ, զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ : Շնորհօք Տեառն մերոյ յ͞ի ք͞ի, որում :

Ուրարին :

Զգեցո՛ Տ͞ր պարանոցի իմոյ զարդարութիւն, և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց : Շնորհօք Տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի :

Ափորոսին, որ է շուրջառն :

Տ͞ր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ, և պարսպեա՛ ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ : Շնորհօք Տեառն մերոյ յ͞ի ք͞ի :

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն՝ ասէ :

Ցնծասցէ անձն իմ 'ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան : Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս : Շնորհօք Տեառն մերոյ յ͞ի ք͞ի :

Եւ յետ զգենլոյ սրբութեան զգեստուցն, եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն։ Եւ քահանայն լուանայ զձեռսն ասելով։ Սաղ․ ԻԵ։

Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանովք քո Տէր։

Սարկաւագն։

Դատ արա ինձ Տէր, զի․ և այլն։
տուն առ տուն փոխն ՚ի ձայն։

Քահանայն։

ՆԻՎԱՄՆ ՍՐԲՈՒՀւոյ Աստուածածնին Տէր ընկալ զաղաչանս մեր․ և կեցո զմեզ։

Սարկաւագն։

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ՚ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն։

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ․ և աղաչանօք ամենայն սրբոց քոց, (և որոց այսօր է յիշատակ)․ լուր մեզ Տէր և ողորմեա, ներեա, քաւեա, և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սուրբ Հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կայելոցն՝ ասէ։

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի ամենայն սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով բանիւ, և գործով, և ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն։

Պատասխանեն որք մերձն են։

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոցն, և այժմուս, և յառաջիկայիցն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ ՚ի հանդերձեալ կեանս։ Ամէն։

Պատասխանեսցէ և նա։

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն Աստուած, և թողցէ զամենայն յանցանս ձեր։ Տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս։ Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս։ Ամէն։

Դպիրքն։

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ։

Քահանայն։

Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ։

Դպիրքն։ Սաղմոս․ ՂԹ․ ձայն։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր․ և այլն։

Սարկաւագն քարոզէ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ․ ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն :

Ի մէջ տաճարիս և առաջի ա̄ծընկալ և պայծառացեալ ս̄բ. նշանացս և սուրբ տեղւոյս, խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զսուրբ զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո փառաւորեմք : Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Քահանայն . սաղ . Խբ . նշոյր :

Մտից առաջի սեղանոյ .

Սարկաւագն :

Դատ արա ինձ Ա̄ծ . և այլն :
տուն առ տուն զփոխն 'ի լման :

Սարկաւագն քարոզէ :

Եւ ես խաղաղութե̄ զՏ̄ր :
Օրհնեսցուք զՀայր Տ̄ն մերոյ Յ̄ի Ք̄սի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութե̄, և երգել զերգս հոգևորս . ամենակալ Տ̄ր Ա̄ծ մեր կեցո՛ և ողորմեա՛ :

Քահանայն :

Ի յարկի սրբութե̄, և 'ի տեղւոջ փառաբանութե̄, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս . առաջի ա̄ծընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք, զսուրբ, զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք : Եւ քեզ մատուցանեմք զօրհնութի̄ և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից .
Ամէն :

Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, առցէ զձ̄է կոնքեռն, և ածցէ 'ի վ̄ր լանջացն և զպատուական եմիփորոնն, և եկեսցէ առընթեր ընծայարան սեղանոյն, լուասցէ զձեռս : Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, լուռ և անձայնաբար ասասցէ զաղօթս առ Տ̄է հոգին տնօրէնին գործոյն :

Ամենակալ բարերար մարդասէր Ա̄ծ բոլորից, յօրինօղ երևութից և աներևութից, փրկօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար Հօր Հզօր Հոգի . հայցեմք բազկատարած մաղթանաց, դողմամբ հեծութեան՝ յանդիման եղե̄լ քեզ ահաւորիդ : Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննելի զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ Հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութե̄ խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ եմմանուելի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի, և արարչի ամենայնի : 'Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութի̄ միասնական ա̄ծութեդ . յորոց մի և դու ճանաչիս անհաս : Քն, և 'ի ձեռն քո առաքինիքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցսն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին . հոգի ա̄յ քարոզեալ զքեզ մովսէսի, որ 'ի գնալն քո 'ի վերայ ջրոցն՝ անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թևապարփակ պաշտպանողօրէն զթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհրդածանուցեր : Յոր կերպարան օրինակութե̄՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածուցած վերջնում վարագուրիդ, յօրինեցեր կարօղ տիրապէս զբովանդակ բնութիս ամենից բնաւից բոլորից գոյից Ա̄մ էից՝ յանէից : Քն ստեղծանելն 'ի նորոգութի̄ յարութե̄ ամենայն եղեալքս առ 'ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց : Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի՝ մերում կերպիւ զքեզ աւետարանեաց ճշմարիտ Ա̄ծ՝ հաւասար և
հա-

համագոյ հօր խուրև հզօրի . զատ 'ի քեզ հայհոյութիւն անքաւելի քարոզեաց . և երբ զմծամարտիցն զքո հեստեալոցն՝ չարաբանական բերանս կարկեաց . և զկուրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամենայնի որ վասն մեղաց մերոց մատնեցաւ . և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ : Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտենից յաւիտեանս : Ամէն :

Դարձեալ կրկնեսցէ 'ի նոյն կարգ բանն, մինչև մըրտահոսութեանն լուսոյ հրաշալիս աղօթեալ յայտնեսցէ առեւտրանել մերոտեն ընկէնեն խաղաղութեան :

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ Հոգւոյդ գթածի՝ որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ Հայր . որ զսուրբս պահես, և զմեղուցեալս մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ Հօր : Արդ՝ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան . և մի շիջցին առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից . վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց : Եւ քանզի մինդ յերրորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ . իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեվանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոյ դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան : Եւ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ զայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախառոյկ կայծակամբն . 'ի ձեռն ունելեացն մատուցման . զի ամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս որդւովդ Աստուծոյ՝ Հօր քաղցրութիւն . որ զանառակ որդին դարձելոց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկս յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան : Այո՛ այո՛ և ես մի եմ 'ի նոցանէ, և զիս ընկա՛լ ընդ նոսին, երբ մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քո ստացեալս : Զի յայսմ ամի՝ յամի ծանիցի քո տէրութիւնդ, ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն գովութեան :

'Ի ձայն :

Զի քո է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն, և փառք յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Ապա յարուցեալ եկեսցէ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախասարկաւագն զնշխարն, զոր առեալ քահանայն դիցէ 'ի մաղզմայն, ասելով :

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ առեալ զգինին արկցէ խաչաձև 'ի սկիհն : Նոյնպէս և սակաւիկ մի ջուր արկցէ, ասելով :

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի :

Եւ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ յոյժ հանդարտութեամբ բանիւն :

Աստուած Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ : Նոյնին դու Տէր օրհ ✠ նեա և այժմ զառաջադրութիւնս զայս : Ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ : Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զընծայողս, և վասն որոց մատուցանի : Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութիւն Սրբոյ խորհրդոյ քոյ : Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր, և Որդւոյ, և Հոգւոյդ Սրբոյ . այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Եւ ծխօղեսցէ ասելով :

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն . և այլն :

Եւ

Եւ արկցէ խունկ ասելով ։

Խունկ մատուցանեմ առաջի քո Քս Ած բուրումն հոգեւորական ։ Ընկալ՛ ՚ի սբ յերկնային, և յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից ։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս, և զպարգեւս հոգւոյդ սրբոյ ։ Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սբյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Եւ երիցս երկրպագելով խորանոյն, համբուրեսցէ զսեղանն ։

Եւ սարկաւագն հայելով ՚ի ժողովուրդն, ձայնեսցէ ասելով ։

Օրհնեա տէր ։

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ ։

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Եւ սկսցեն այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն ։

Եւ յաւարտման երգոյն ձայնէ սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութե զտր ։

Ժողովուրդն ։ Տէր ողորմեա ։
Սարկաւագն ։ Կեցո և ողորմեա ։
Ժողովուրդն ։ Կեցո տէր ։

Սարկաւագն ։ Օրհնեա տէր ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

Տէր Ած մեր, որոյ կարողութիւնդ անքննելի է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ ։ Դու ըստ առատ մարդասիրութե քում, նայեա ՚ի ժողովուրդս քո, և ՚ի տաճարս յայս սբ ։ Եւ արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութի քո, և զգթութիւն ։ Զի քեզ վայելէ փառք իշխանութի, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Քահանայն ասասցէ խորհրդաբար ։

Տէր Ած մեր, կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա, սրբեա զնոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ ։ Դու զմեզ փառաւորեա ածային զօրութեամբ քով ․ և մի թողուր զյուսացեալքս ՚ի քեզ ։ Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն ։

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգեւել խոստացար ։ Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս առ ՚ի յօգուտն կատարեա, շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումդ ճշմարտութե և ՚ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգեւելով ։ Զի բարերար և մարդասէր ես Ած ․ և քեզ վայելէ փառք, իշխանութի, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ։

Եւ ապա ասասցէ շարական ըստ պատշաճի աւուրն ։
Եւ ՚ի միջի նորա երթիցեն առաջի բեմին, և երկրպագիցեն երիցս ։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս ։

Տէր Ած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս, և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ՚ի սպասաւորութի փառաց քոց ։ Արա այժմ ընդ մուտս մեր մտանել և սբց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քումդ բարերարութեանդ ։

՚Ի ձայն ։

Զի քո է կարողութի և զօրութիւն և փառք յաւիտեանս ․ Ամէն ։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և յաւարտման շարականին՝ գոչեսցէ սարկաւագն ։

Պռօսխումէ ։

Եւ

Եւ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ ։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ [illegible] ողորմեա մեզ ։

Եւ քահանայն զոյգ ընդ նմին ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս ։

Սուրբ, որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկրպագանեն ։ Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զամենայն արարածս ։ Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգգօնութիւն. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր ՚ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան ։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալս և զանարժան ծառայքս քո ՚ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ ։ Դու Տէր ընկալ ՚ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւն, և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբ ։ Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ ։ Սրբեա զհոգի զմիտս և զմարմինս մեր. և շնորհեա ՚ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան ։ Զի սուրբ ես Տէր Աստուած մեր, և քեզ վայել է փառք, իշխանութիւն, և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ սարկաւագն քարոզեսցէ ։

Եւ ևս խաղաղութ[illegible] զՏէր ։
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի ։

Սարկաւագն ձայնեսցէ ։

Օրհնեա Տէր ։

Եւ քահանայն բազկատարած ասասցէ ՚ի ծածուկ զաղօթս ։

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում ։ Զգթութիւն քո առաքեա ՚ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակնունին առ ՚ի քէն առատ ողորմութեանդ ։

Ի ձայն ։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած, և քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ քահանայն [illegible] ։ Եւ [illegible] ։ Այսպէս, [illegible] ։ Եւ ընթերցցեն զգիրս մարգարէականս, և առաքելականս ։ Եւ [illegible] ։ Եւ յառաջ [illegible] սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ ։

Օրթի ։

Քահանայն դարձցի ՚ի ժողովուրդն, և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն. և ասասցէ ։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Երկիւղածութեամբ լուարուք ։

Սարկաւագն ։

Սրբոյ աւետարանիս ըստ Մատթէոսի ։

Ժողովուրդն ։ Փառք քեզ Տէր Աստուած մեր ։
Սարկաւագն ։ Պռօսխումէ ։
Ժողովուրդն ։ Թէ օթէօս ։

Եւ սարկաւագն ընթերցցէ զաւետարանն. և յետ աւարտին ասասցեն ամենեքեան ։

Փառք քեզ Տէր Աստուած մեր ։

Եւ ասասցեն զհաւատամքն ։

Հաւատամք ՚ի մի Աստուած հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից ։ Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ հօրէ՝ միածին նախ քան զամենայն յաւիտեանս ։ Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արա-

րարած։ Նոյն ինքն համագոյակից հօր, որով ամ՟ ինչ եղև յերկինս և ՚ի վ՟ր երկրի՝ երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վ՟ն մերոյ փրկութեան՝ իջեալ ՚ի յերկնից, մարմնացաւ՝ մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւովն սրբով։ Որով էառ մարմին, հոգի, միտս, և զամ՟ որ ինչ է ՚ի մարդ․ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութե՟ն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ՚ի ս՟բ հոգին՝ յանեղ և ՚ի կատարեալ, որ ՚ի հօրէ և յորդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ՚ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ ՚ի ս՟բս։ Հաւատամք և ՚ի մի միայն ը՟նհանրական և առաքելական եկեղեցի։ ՚Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն՝ ՚ի քաւութիւն՝ և ՚ի թողութ՟ի մեղաց։ ՚Ի յարութիւն մեռելոց։ ՚Ի դատաստանն յաւիտենից, հոգւոց, և մարմնոց։ Յարքայու՟ի երկնից՝ և ՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր ս՟բ հոգին։ Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութէ՟ ասեն լինել զորդին ա՟յ, և կամ զս՟բ հոգին։ Եւ թէ փոփոխելի են՝ կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Լուսաւորիչն։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով ս՟բյ երրորդութե՟ն, և մի ա՟ծութե՟ն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ժողովուրդն։ Ամէն։

Եւ սարկաւագն քարոզեսցէ ՚ի ձայն։

Եւ ևս խաղաղութե զ՟տր։
Ժղ՟վն։ Տ՟ր ողորմեա։
Սրկ՟գն։ Եւ ևս հաւատով։

Մինչ նոքա երգեն, քահանայն զաղօթս ասէ ՚ի ծածուկ։

Տ՟Ր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քո։ Որ դու քոյին կամաւ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի, և մահու՝ յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։ Հաղորդս արա և զմեզ տ՟ր, աղաչեմք զքեզ՝ ա՟ծային պարգևացդ, թողութեան մեղաց, և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ։

՚Ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութ՟ի ✠ ամենեցուն։

Խաղաղութ՟բ քով ք՟ս փրկիչ մեր, որ ՚ի վեր է քան զամ՟ միտս և զբանս՝ ամրացո զմեզ, և աներկիւղ պահեա յամ՟ չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութ՟բ քեզ երկրպագանեն։ Վասն զի ամենաս՟բ երրորդութե՟դ վայելէ՝ փառք, իշխանութ՟ի և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ տ՟ր մեր յ՟ս ք՟ս։

Ժողովուրդն։ Ամէն։
Սարկաւագն։ Օրհնեա տ՟ր։

Քահանայն։

Տ՟Ր ա՟ծ օրհնեսցէ ✠ զամենեսեանսդ։

Սարկաւագն։ Սաղմոս ասացէք։

Սրբասացութ՟ի ըստ խորհրդեան աւուրն։
Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ։

Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք։

Դպիրքն եղանակեսցեն։

Մարմին տէրունական, և այլ։

Եւ ապա եղանակեսցեն։

Որք ըստ քրովբէից։

Եւ ՚ի սարկաւագացն վերաբերել սրբազան հացն, և օրհնութեան բաժակին ՚ի մէջ սեղանոյն։

Եւ մինչ նոքա երգեսցեն, քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Ոչ ոք արժանի է յըմբռնելոյս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել ՚ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպարագրելի բանդ հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Զի դու ես տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ ՚ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից տէր, և Թագաւոր Իսրայէլի։ Որ միայն սուրբ ես, և ՚ի սուրբս հանգուցեալ։ Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալուր, նայեա՛ յիս ՚ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ սուրբ հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհս, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ մերժեր զիս ՚ի ծառայից քոց։ Այլ արժանի՛ արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։ Զի դու ես՝ որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն հարբդ, և ամենասուրբ և բարերար հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից.

Ամէն։

Եւ ընծայքն վերաբերեսցին ՚ի սեղանն մէջ. և քահանայն խնկարկեսցէ ՚ի վերայ սեղանոյն. և լուասցէ զձեռս ասելով։

Լուացից սրբութեամբ զձեռս։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեամբ զտէր։

Ժողովուրդն։ Տէր ողորմեա։
Սարկաւագն։ Եւ ևս հաւա։

Քահանայն՝ ընդ սարկաւագ կայցէ ՚ի խորհրդեանն, մինչ նա պատրաստն ասիցէ, համբուրեսցէ զսեղանն. և խաչակնքեալ ✠ զժողովուրդն, երկրպագութեամբ կայցէ առաջի սեղանոյն. և ասասցէ ՚ի ծածուկ աղօթս։

Տէր Աստուած զօրութեանց, և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զամենայն ՚ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր։ Որ և զմեր հողեղէն բնութիւս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի ահաւոր, և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։ Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագս, ընկալ սա ՚ի մէնջ զառաջադրութիւնս զայս։ Եւ աւարտեա զսա ՚ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քո։ Դեղ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս։

Ի ձայն։

Շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ հօր՝ միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Ժողովուրդն։ Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։ Ողջոյն տուք միմեանց։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս։

Ձայնեսցէ սարկաւագն։

*** Ահիւ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ահիւ կացցուք, երկիւղիւ :

Դպիրքն : Առ քեզ ած :
Սարկաւագն : Պատարագ քս մատչի :
Դպիրքն : Ողորմութի և խա :

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ 'ի վե ժողովրդեանն, և ասասցէ :

Շնորհք, սէր, և ածային սրբարար զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան :

Ժողովուրդն : Եւ ընդ հոգւոյդ :
Սարկաւագն : 'Ի վեր ընծայեցուցէք :
Դպիրքն : Ունիմք առ քեզ տր :
Սարկաւագն : Եւ գոհացարուք :
Դպիրքն : Արժան և իրաւ :

Քահանայն խոնարհեալ աղօթեսցէ 'ի ծածուկ :

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ հայր ամենակալ : Որ քոյին անքննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրձիմն : Նոր ժողովուրդ ինքեան առեր զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ : Եւ զննելի բնութե ըստ 'ի կուսէն տնտեսութե հաճեցաւ բնակել 'ի մեզ : Եւ նորագործ ածապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար : Վանզի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ, և յանմատոյց լուսոյ ածութեդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս :

'Ի ձայն :

Եւ ընդ սերովբէսն, և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութե յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել :
ՍԲ սբ սբ տր զօրութենց, լի են երկինք և երկիր :






D. u. V. v. H. Gerhart, Grüng. 32 Wien

# Die 7. h. Worte Jesus am Kreuze.

Քահանայն բազկատարած աղօթէ 'ի ծածուկ, մինչ նոքա երգեցեն։

Սուրբ սուրբ սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ, և ո՞վ որ պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարերարութեանդ զեղմունս։ Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ մխիթարեցեր՝ մարգարէիւք՝ օրինացն տուչութեամբ՝ քահանայութեամբ՝ և ստուերակերպ երնջոցն մատուցմամբ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զորդին քո միածին՝ պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ։ Զի նա ինքն է բաշխօղ. և նոյն ինքն բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս։ Զի եղեալ ճշմարտապէս և առանց ցնորից մարդ, և անշփոթ միութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն և 'ի սրբոյ կուսէն Մարիամայ։ Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. և յաշխարհակեցոյց և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն։

Առեալ զհացն 'ի սուրբ՝ յԱստուածային՝ յանարատ և 'ի պատուական ձեռս իւր.
Օրհնեաց, գոհացաւ, եբեկ՝ ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ՝ և բազմեալ աշակերտացն՝ ասելով։

Առէք կերէք.

այս է մարմին իմ։

Որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Նոյնպէս և զբաժակն առեալ.
Օրհնեաց, գոհացաւ, էարբ՝ ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ՝ և բազմեալ աշակերտացն՝ ասելով։

Արբէք 'ի սմանէ ամենեքեան.

այս է արիւն իմ, Նորոյ ուխտի, որ յաղագս ձեր, և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել պատուէրան աւանդեաց մեզ բարերար որդին քո միածին։ Եւ իջեալ 'ի ստորինս վայրս մահու՝ մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ։ Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուած կենդանեաց և մեռելոց։

Եւ առեալ զընծայս 'ի ձեռս ասասցէ 'ի ձայն։

Եւ արդ՝ մեք Տէր ըստ այսմ հրամանատուութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ։ Յիշեմք զդորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զԱստուածավայել համբարձումն, զնստելն ընդ աջմէ քո Հայր. զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

Եւ դիցէ զընծայսն 'ի վերայ սեղանոյն, և ասասցէ 'ի ձայն։

Եւ զքոյս 'ի քոյոցս քեզ մատուցանեմք ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն։

Դպիրքն։ Յամենայնի օրհնեալ ես։

Մինչ նոքա երգիցեն՝ քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ։

Զքեզ արդարև Տէր Աստուած մեր գովեմք, և զքեզն գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։ Ոչ յաղագս մերոյ

մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք համապազ : Այլ ՚ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քո տ՟ն. մերոյ և փրկչին յ՟ի. ք՟ի : Որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Խաղաղութիւն ✠ ամենեցուն :

Սրկ՟ն : Ա՟յ երկիրպագես :
Ժող՟ն : Առաջի քո տ՟ր :

Քահանայն խոնարհեսցի և ասասցէ :

Երկիրպագանեմք և աղաչեմք , և խնդրեմք ՚ի քէն բարերար տ՟ծ՝ առաքեա՛ ՚ի մեզ , և յառաջի եդեալ ընծայս յայս զմշտնջենաւորակից քո , և զէակից ս՟բ. հոգիդ :

Եւ կնքեալ խաչանիշեսցէ զընծայսն՝ ասելով ՚ի ցած :

Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Որով զհաց օրհ✠նեալ մարմին ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն ստուգապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի :
Որով զհաց և զգինի օրհ✠նեալ մարմին և արիւն ճշմարտապէս արարեր տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի՝ փոխարկելով հոգւովդ քով ս՟բով :

Երիցս անգամ կրկնեսցէ զաղօթս : Եւ սարկաւագն ՚ի ցած , Ամէն :

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն .

Որպէս եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն ՚ի քաւութիւն , և ՚ի թողութիւն մեղաց :

Եւ ապա տարածեալ զձեռս աղօթեսցէ ՚ի ծածուկ :

Սովաւ շնորհեա՛ զսէր զհաստատութիւն , և զցանկալի զխաղաղութիւն ամ՟ն աշխարհի . ս՟բ եկեղեցւոյ , և ամ՟ն ուղղափառ եպիսկոպոսաց , քահանայից , սարկաւագաց , թագաւորաց աշխարհի , իշխանաց , ժողովրդոց , ճանապարհորդելոց , նաւելոց , կապելոց , վտանգելոց , աշխատելոց , և որք ՚ի պատերազմունս բարբարոսաց :
Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն , և անդոց զպտղաբերութիւն , և ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն :
Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ՚ի ք՟ս ննջեցեալսն՝ զեպիսկոպոսունսն՝ զերիցունսն՝ զսարկաւագունսն՝ և զնաւ ուխտ եկեղեցւոյ քում ս՟բոյ , և զամենեան՝ որք յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս :

՚Ի ձայն :

Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար տ՟ծ աղաչեմք :

Ժող՟ն : Յիշեա՛ տ՟ր և ողորմ :

Քահանայն :

Ա՟ծածնին ս՟բոյ կուսին մարիամու , և յովհաննու մկրտչին , ստեփաննոսի նախավըկային , և ամ՟ն ս՟բոց՝ եղիցի յիշատակ ՚ի ս՟բ պատարագս աղաչեմք :

Ժող՟ն : Յիշեա՛ տ՟ր և ող :

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ :

Առաքելոց ս՟բոց , մարգա :

Եւ

Եւ մինչ սարկաւագն քարոզն ասիցէ, քահանայն զաղօթս ասիցէ. զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զսուրբ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, եւ ազատեցեր խաչիւն սրբով. շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ հատանեն 'ի մեզ զբանն ճշմարտութեան։

Աստ յետ յիշելոյն զմեռեալն, յիշեսցէ եւ առաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի՝ եւ պատուոյն, թէ Պատրիարգ իցէ. թէ Արքեպիսկոպոս իցէ. եւ թէ Եպիսկոպոս իցէ։ Բայց Կաթողիկոսին, եւ կամ Սրբազան Հայոց՝ եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուածօղ՝ ո՛չ երբէք, եւ ո՛չ ուրեք յիշեսցէ։ Իսկ եթէ իցէ ուղղափառ՝ յիշեսցէ միայն 'ի թեմ, եւ 'ի վիճակի իւրում, եւ ո՛չ երբէք արտաքոյ նորին։

'Ի ձայն։

Եւս առաւել զսրբազան Պապն մեր՝ զՏէր այս անուն։ Եւ զերջանիկ պատրիարգն մեր՝ զՏէր այս անուն։ Կամ զարքեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն։ Կամ զեպիսկոպոսն մեր՝ զՏէր այս անուն։ Շնորհեսցես մեզ ընդերկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Եւ աստ 'ի յիշատակի սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն յետ աղօթից։ Որ մի ոք մեռածին հարցելով շրջեսցէ, զի թերեւս խորովու է ատայեալ պատուական օրինացն։

Գոհութիւն եւ փառաբանու։

Եւ ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս ասիցէ, զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զքո առաջի կացեալ ժողովուրդս, եւ զպատարագիս մատուցօղս, եւ պարգեւեա՛ սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛ եւ օրհնեա՛ զուխտաւորս եւ զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ. եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քոյ՝ հարիւրապատիկ աստ՝ եւ 'ի հանդերձելումդ։

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛, եւ գթա՛ 'ի հոգիս հանգուցելոցն, հանգո՛ զամենն, եւ լուսաւորեա՛, եւ դասաւորեա՛ ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, եւ արժանի՛ արա ողորմութեան քում։

Յիշեա՛ Տէր եւ զհոգի ծառայի քոյ. այս անուն. եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան քում, եւ հանգո՛ այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց. եւ եթէ կենդանի է, փրկեա՛ զնա յամ որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ։

Յիշեա՛ Տէր եւ զայնոսիկ, որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս եւ զհանգուցեալս. կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա եւ զմերս՝ ընդ ուղղորդն, եւ որ լի՛ն է փրկութեան։ Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնդ։ Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացս յընդունակութիւն մարմնոյ եւ արեան միածնի քոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր ամենակալի՝ համդերձ կենդանարար եւ ազատիչ սուրբ Հոգւովդ՝ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Քահանայն դարձցի եւ խաչակնքեսցէ զժողովուրդն՝ ասելով բարձր։

Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ, եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ✠ ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Եւ եւս խաղաղութեան։
Ժողովուրդն։ Տէր ողորմեա՛։
Սարկաւագն։ Ամենայն սրբովք զորս։

Եւ անդէն ընդ քարոզութեանն՝ քահանայն բազկատարած խոնարհաբար աղօթեսցէ 'ի ծածուկ։

Աստուած ճշմարտութեան, եւ Հայր ողորմութեան գոհանամք զքէն. որ 'ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտաւորեցելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն։ Զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ Տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ 'ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեան

թեանս շնորհ՝ որ ըստ օրէ պայծառացու-
ցեալ ծաղկեցո 'ի մէջ եկեղեցւոյ քում
սրբոյ ։

'Ի ձայն ։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբա-
ռով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ
երկնաւոր Հայր, երգել և ասել ։

Եւ ժողովուրդն բազկատարած եղանակեսցեն ։

Հայր մեր, որ յերկինս ես ։

Եւ մինչ նոքա երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ 'ի
ծածուկ ։

Տ՜Ր տ՜րանց, ա՜ծ աստուածոց Թագաւոր
յաւիտենական արարիչ ա՜մ արարա-
ծոց, Հայր տ՜ն մերոյ յ՜ի ք՜ի, մի տար
զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ,
և ապրեցո 'ի փորձութենէ ։

'Ի ձայն ։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Քահանայն ։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Ա՜յ երկրպագեսցուք ։
Ժողովուրդն ։ Առաջի քո տ՜ր ։

Քահանայն խոնարհեսցէ և ա՜մ ժողովուրդն ընդ
նմա 'ի վայր, և քահանայն աղօթեսցէ 'ի
ծածուկ ։

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողոր-
մութեան Հոգիդ սուրբ, ողորմեա՛
ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր-
պագանեն ա՜ծութեանդ քոյ ։ Պահեա՛ զսոսա
ամբողջս ։ Տպաւորեա՛ յոգւոյ սոցա զձև-
մարմնոյ ցուցակի առ 'ի ժառանգութիւն և
'ի վիճակ հանդերձելոց բարեաց ։

'Ի ձայն ։

Ք՜իւ Յ՜իւ տ՜րամբ մերով, ընդ որում
քեզ հոգւոյդ սրբոյ և հօր ամենակալի
վայելէ փառք իշխանութիւն և պատիւ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։
Ամէն ։

Եւ քահանայն առեալ զսբ հացն 'ի ձեռս,
սարկաւագն ձայնեսցէ բարձր ։

Պռօսխումէ ։

Եւ քահանայն բարձրացուսցէ ա՜նէրն ժողո-
վրդեանն՝ և ասասցէ ։

'Ի սրբութիւն սրբոց ։

Ժողովուրդն բարձր ձայնիւ ։

Միայն սբ, միայն տ՜ր, յ՜ս ք՜ս, 'ի փառս
ա՜յ հօր ։ Ամէն ։

Քահանայն ։

Օրհնեալ հայր սբ ա՜ծ ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։

Քահանայն ։

Օրհնեալ որդին սբ ա՜ծ ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։

Քահանայն ։

Օրհնեալ հոգին սբ ա՜ծ ճշմարիտ ։
Ժողովուրդն ։ Ամէն ։

Քահանայն ։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւի-
տեանս յաւիտենից ։ Ամէն ։

Դպիրքն ։ Հայր սուրբ, որդի ։

Եւ մինչ նոքա երգիցեն զայս, քահանայն խոնար-
հեսցի, և աղօթեսցէ 'ի ծածուկ ։

Նայեաց տ՜ր մեր յ՜ս ք՜ս յերկնից 'ի սրբու-
թենէ քումմէ ։ և յաթոռոյ փառաց
թագաւորութեան քո ։ Եկ 'ի սրբել և 'ի
կեցուցանել զմեզ ։ որ ընդ հօր նստիս,
և աստ պատարագիս ։ Արժանի՛ արա տալ
մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և 'ի պատ-

ուա

ուական յարենէ․ և 'ի ձեռս մեր ամ՟ ժողովրդեանս ։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ՝ և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զսբ մարմինն ողջ թաթեսցէ յանապական արեանն, և ասասցէ ։

Տ՟Ր ա՟ծ մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն 'ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդիլ ս՟բ մարմնոյ և արեան միածնի քո ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ՟ր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն ։ Եւ գոհութ՟ փառաւորել ըզքեզ ընդ որդւոյ և ս՟բ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից․
Ամէն ։

Եւ բարձրացուսցէ անձամբ ծածկոցեանն, և ասասցէ առ նա բարձր ։

Ի ս՟բ 'ի ս՟բ պատուական մարմնոյ և յարենէ տ՟ն մերոյ և փրկչին յ՟սի ք՟սի, ճաշակեսցուք սրբութ՟, որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում ։ Սա է կեանք ✠, յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մեղաց ։ Սաղմոս ասացէք տ՟ն ա՟յ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի 'ի կառս քերովբէականս ։

Սարկաւագն ձայնեսցէ բարձր ։
Սաղմոս ասացէք տ՟ն ա՟յ ։

Դպիրքն եղանակեսցեն ։

Ք՟ս պատարագեալ բաշխի ։

Մինչ նոքա երգեսցեն, քահանայն առցէ զմարմինն 'ի ձեռն, և համբուրեսցէ արտասուօք ասելով զայս ։

Զո՞ր օրհնութիւն, կամ զո՞ր գոհութիւն 'ի վ՟ր հացիս և բաժակիս ասասցուք, այլ յ՟ս զքեզ միայն օրհնեմք՝ հանդերձ հարբդ և ամենասուրբ հոգւովդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․
Ամէն ։

Դարձեալ ասասցէ ։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես ք՟ս որդի ա՟յ, որ բարձեր զմեղս աշխարհի ։

Եւ բեկեալ արկցէ 'ի բաժակն արեան՝ ասելով ։

Լրումն հոգւոյն սրբոյ ։

Եւ ապա առեալ զմի մասն 'ի ձեռս իւր, ասասցէ 'ի ծածուկ արտասուօք և գոհութեամբ առ հայր ։

Հայր ս՟բ, որ անուանեցեր զմեզ անուանակցութ՟ միածնի քո, և լուսաւորեցեր մկրտութ՟ հոգևոր աւազանին ։ Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն ։ Տպաւորեա 'ի մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ ոպ՟ 'ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին, և եղեն մաքրիչք ամ՟ աշխարհի ։ Եւ արդ՝ տ՟ր հայր բարերար՝ զհաղորդութիւնս զայս մասնաւորեա ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց ։ Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ․ և մի՛ արգելուր զշնորհս հոգւոյդ ս՟բ ։ Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քո, պարգևեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց ։ Որպէս խոստացաւ և ասաց տ՟ր մեր յ՟ս ք՟ս, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան ։ Արդ՝ արա զսա մեզ 'ի քաւութ՟, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․
Ամէն․

Խաղաղութ՟ ✠ ամենեցուն ։

Գոհանամ զքէն ք՟ս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ ս՟բ մարմնոյ և արեան քո ։ Եւ այժմ տ՟ր աղաչեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ 'ի դատապարտութ՟, այլ 'ի քաւութ՟ և 'ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն ամ՟ գործոց առաքինութեան ։ Ոպ՟ զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ․ և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ երրորդութեանդ ։ Զի ընդ

ս՟բս

տուրբս քո արժանի եղէց փառաւորել ըն-
քեզ ընդ Հօր և ը̅ սրբոյ Հոգւոյդ, այժմ
և միշտ, և յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Յովհաննու ոսկեբերանին:

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ Տր ած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայմիկ՝ հաղորդակից լինիլ ածային և սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և [illegible]ուական արեանդ: Սմա այսորիկ զ[illegible]ա 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ զամ աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քոյ պահեա զիս: Որպէս յիշելով զբարեգթութիւնս քո, և կենդանի եղեց ընդ քեզ՝ որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար: Մի՛ մերձեսցի Տր իմ և ած խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով: Ամենակարող մաքրեա զիս սրբոյ յամ մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ: Ամրացո զկեանս իմ Տր յամ փորձութենէ. և զպատերազմօղն իմ դարձո յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ յառնէ 'ի վր իմ: Ամրացո զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամ ճանապարհս մարմնոյ իմոյ: Լեր հանապազորդ ընդ իս ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ՝ և ես 'ի նմա: Դու ասացեր մարդասէր, կացո զբանս ածային անլուծանելի հրամանաց քոց: Զի դու ես ած ողորմութեան և գթութեան և մարդասիրութեան, և պարգևիչ ամ բարեաց. և քեզ վայել է փառք հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ ապա տէրունագրեսցէ զսկիհն, և խնդրեսցէ 'ի ճշմարտէն Տյ զըղձալիս հայցուածս անձին իւրոյ՝ և ժողովրդեան և աշխարհի. և թողութիւն խնդրեսցէ իւրոց յանցաւորացն ննջեցելոց և ապրելեաց: Եւ անդէն ահիւ և դողութեամբ ճաշակեսցէ 'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակէն՝ ասելով:

Մարմին քո անապական լիցի ✠ ինձ 'ի կեանս: Եւ սուրբ արիւն քո 'ի քաւութի և 'ի թողութիւն մեղաց.

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա: Եւ առցէ սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր:

Երկիւղիւ և հաւատով յառա՛ջ մատիք:

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ:

Ած մեր և Տր մեր երևեցաւ.

Եւ հաղորդեսցին որք ձեռնադրեալքն, բայց ոչ 'ի բերանն, այլ 'ի յափն տալով զսրբութիւնն: Եւ ապա արժանաւոր ժողովրդոյն հաղորդեսցէ: Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր:

Կեցո Տր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա՝ յայսմհետէ մինչև յաւիտեան:

Եւ յետ հաղորդութեան երգեսցեն:

Լցաք 'ի բարութեց քոց:

Քահանայն:

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ:
Ալէլուիա:
Գոհանամք զքէն քս Թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբդ քով սրբով շնորհեա զքաւութիւն և զմեծ ողորմութիւն:
Ալէլուիա:
Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան: Ալէլուիա:

Սարկաւագն: Եւ ևս խաղաղ: Եւ ևս հաւատով:
Ժողովն: Գոհանամք զքէն:

Եւ քահանայն ասասցէ 'ի ծածուկ:

Գոհանամք զքէն քս ած, որ զայսպիսի ճաշակումն բարութե շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան: Սովին պահեա զմեզ Տրս և անարատ բնակեալ զմեօք քո ածային խնամօքդ. Հովուեա
զմեզ

զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց, և բարերարաց։ Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեանց, քումդ ևեթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ, և ճշմարիտ հովուին հետևել, և առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Ամ մեր և տր և փրկիչ յս քս։ Որ ես օրհնեալ ընդ հօր, և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Անքննին, անհաս, երրեակ ինքնութիւնդ, հաստիչ ընդունող և անբաժանելի միաւորական սուրբ երրորդութիւնդ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա ասէ պաշտօնեայն թէ 'ի ձեռն եպս և երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն։ Եւ իջեալ 'ի դէմ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս։ 'Ի ձայն։

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ տր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ։ Կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա։ Սրբեա զնոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա ածային զօրութեամբ քով։ Եւ մի՛ թողուր զյուսացեալսս 'ի քեզ։ Զխաղաղութիւն քո պարգևեա ամ աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նց, և ամ ժողովրդեանս։ Զի ամ տուրք բարիք, և ամ պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեն առ 'ի քէն, որ ես հայր լուսոյ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ժողովուրդն ասասցեն երեք անգամ։

Եղիցի անուն տն օրհնեալ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ 'ի ձայն։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քս այ փրկիչ մեր։ Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւնս քո։ Լցո և զմեզ հոգւովդ քով սրբով։

Սարկաւագն. Օրհնեա։

Քահանայն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Դպիրն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սրկն։ Երկիւղածութբ լուարուք։

ՍՐԲՈՑ

# ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Ի Հօրէն լուսոյ ։

Ի սկզբանէ էր բանն. և բանն էր առ ած. և ած էր բանն ։ Նա էր ՚ի սկզբանէ առ ած ։ Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղևն ։ Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. և լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու ։ Եղև այր մի առաքեալ յայ. անուն նմա յովհաննէս ։ Սա եկն ՚ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ ։ Ոչ էր նա լոյսն ։ այլ զի վկայեսցէ վն լուսոյն ։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամ մարդ՝ որ գալոց է յաշխարհ ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև. և աշխարհ զնա ոչ ծանեաւ ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան ։ Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նց իշխանութիւն որդիս այ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նր. ոյք ոչ յարենէ և ոչ ՚ի կամաց մարմնոյ և ոչ ՚ի կամաց առն, այլ յայ ծնան ։ Եւ բանն մարմին եղև՝ և բնակեաց ՚ի մեզ ։ և տեսաք զփառս նր՝ զփառս իբրև զմիածնի առ ՚ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութբ ։

Սրկն ։ Մե խաչիւս աղա ։

Քահանայն ։

Պահպանեա զժղվդս քո քս ։

Ժղվրդն ։ Օրհնեցից զտր յամ ժամ ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր ։

Օրհնեալք ✠ եղերուք ՚ի շնորհաց սբ հոգւոյն, երթայք խաղաղութբ. և տր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. Ամէն ։

Յետ յարութե տն մերոյ յսի քսի ։

Եւ իբրև ճաշեցին, ասէ ցսիմոն պետրոս յս. սիմոն յովհաննու սիրես զիս առաւել քան զդոսա ։ ասէ ցնա. այո տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ ։ ասէ ցնա՝ արածեա զգառինս իմ ։ Դարձեալ ասէ ցնա, սիմոն յովհաննու սիրես զիս ։ ասէ ցնա. այո տէր և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ ։ ասէ ցնա՝ արածեա զոչխարս իմ ։ Ասէ ցնա երիցս անգամ. սիմոն յովհաննու սիրես զիս. տրտմեցաւ պետրոս, զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս. և ասէ ցնա. տէր՝ դու զամ գիտես. և դու իսկ զամենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ. ասէ ցնա յս. արածեա զոչխարս իմ. Ամէն ամէն ասեմ քեզ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո և կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կալցես. և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս ։ Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զած ։ և զայս իբրև ասաց, ասէ ցնա, եկ զկնի իմ ։

Եւ դպիրքն ասասցեն զսաղմոսն. ԼԳ ։

Ի տէր պարծեսցի անձն իմ ։

Եւ ընդ սաղմոսելն՝ բաշխեսցի նշխար ժողովրդեանն ։ Եւ յաւարտմանն դարձցի քահանայն յարևելս, երկրպագեսցէ առաջի սբյ սեղանոյն, և ասասցէ ։

Տր ած յս քս ողորմեա ինձ ։

Եւ մտեալ յաւանդատունն՝ մերկասցի ՚ի զգեստուցն ։ Ելեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթիցէ խաղաղութեամբ ։

# ԱԼԷԼՈՒԻԱՑՔ

Ի Ծայրայայտնութեան ճրագալուցին ։

Հոգին Սբ. եկեսցէ 'ի քեզ . և զօ րութի՟ն բարձրելոյն հովանի լիցի 'ի վ՟ր քո ։

ծն ա ։ Այսօր ծնաւ որ 'ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդի . որ է օծեալ Տ՟ր 'ի քղքի դաւթի . 'ի վայելչութի՟ Սբ. քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ ։

Ստեփաննոսի ։

Բ ։ Հոգւով Սբ. զօրացեալ Սբ. Ստեփաննոս , և ընտրեալ յորովայնէ , Ճշմարիտ վկայ . սիրող և առաքելոյն , 'ի քեզ ըն կալար զուարթնոյն զպսակն ։

Գ ։ Կարապետն յովհաննէս զարհուրեալ յո րովայնէ յորովայն երկրպագէր . սպասա ւոր եղև բանին այ . և լռեալ զահաւոր զձայնն աղաղակէր ասելով . ահա գառն այ որ բառնայ զմեղս աշխ ։

Դ ։ Ուրախ լեր բերկրեալդ Տ՟ր ը՟ քեզ . օրհնեալ ես դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո ։

Ե ։ Դու մանուկ , մարգարէ բարձրելոյն կոչեսջիր . գնասցես առաջի Տ՟ն պատրաս տել զճանապարհս ն՟ր ։

Զ ։ Հանեա զիս 'ի գբոյ տառապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Է ։ Երդուաւ Տ՟ր դաւթի ճշմարտութ՟բ , և ոչ ստեաց նմ՟ 'ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ ն՟ր ։

Ը ։ Ուրախ լիցին երկինք , և ցնծասցէ եր կիր . զուարճասցի ծով լրիւ իւրով , տիե զերք և ամ՟ բնակեալքն 'ի նմ՟ ։

Ծննդեան յովհաննու կարապետին ։

Կարապետն յովհաննէս զարհուր" Ա՟ն ։

Տեառնընդառաջին ։

Արդ արձակես զծառայս քո Տ՟ր ըստ բանի քում 'ի խաղաղութի՟ զի տեսին աչք իմ զփրկութ. ա՟ծ ։

Ալէլուիայք ճաշու յինանց ։

Սղր ։ Գովեա երուսաղէմ զՏ՟ր և օրհնեա զա՟ծ քո սիոն ։

Բշ ։ Գովեա երուսաղէմ զՏ՟ր և օրհնեա զա՟ծ քո սիոն ։

Գշ ։ Տ՟ր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն . 'ի փրկութե՟ քում ցնծասցէ յոյժ ։

Դշ ։ Քեզ վայելէ օրհնութիւն ա՟ծ 'ի սիոն և քեզ տացին աղօթք յէմ ։

Եշ ։ Տ՟ր ո՞վ կացցէ 'ի խորանի քում . կամ ով բնակեսցի 'ի լեառն Սբ. քո ։

Ուր ։ Տ՟ր թագաւորեաց զվայելչութի՟ զգե ցաւ . զգեցաւ Տ՟ր զօրութիւն ընդ մէջ իւր էած ։

Ձէ ։ Ցնծացէք առ ա՟ծ օգնական է մեր . աղաղակեցէք առ աստուած յակոբայ ։

Ալէլուիայք ճաշու համբարձման ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր . համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց ։

Համբարձաւ ա՟ծ օրհնութ՟բ և Տ՟ր մեր ձայնիւ փողոյ ։

Ալէլուիայք ճաշու հոգւոյն սբյ ։

Սղր ։ Զօրութեամբ Տ՟ն լի եղև երկիր . և բանիւ տեառն երկինք հաստա տեցան . և հոգւով բերանոյ ն՟ր ամ՟ զօրու թիւնք ն՟ց ։

Բշ ։ Ձայն Տ՟ն 'ի վ՟ր ջուրց . և ա՟ծ փա ռաց որոտաց , և Տ՟ր ինքն 'ի վ՟ր ջուրց բազմաց ։

Գշ ։ Ո՟վ իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մորու սն ահարոնի . և 'ի մորուացն իջանէ 'ի գրապանս զգեստու ն՟ր ։

Դշ ։ Գնացք գետոց ուրախ առնեն ըզ քղքն այ . և Սբ. արար զյարկս իւր բարձրեալն ։

Եշ ։ Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։

ուր : Յիշեա տէր զդաւիթ և զամենայն հեզութիւն նորա :
շբ : Ամբարձա'ն գետք տէր․ և ամբարձին գետք զձայնս իւրեանց․ և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց :

Ալէլուիայ ճաշու յարուէ :

աձ : Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ սիոնի , ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ :
ակ : Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց :
բձ : Ծափս հարէք ամենայն հեթանոսք , աղաղակեցէք առ աստուած 'ի ձայն ցնծութեան :
բկ : Արի տէր աստուած իմ 'ի հրամանս քո․ զոր պատուիրեցեր․ և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքև․ վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տէր :
գձ : Ուրախ եղև խորայել յարարիչ իւր․ և որդիք սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց :
գկ : Եկայք և տեսէք զգործս տեառն , որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան :
դձ : Հաճեցար տէր ընդ երկիր քո , և դարձուցեր զգերութի յակոբայ :
դկ : Յարեաւ աստուած , և ցրուեցան ամենայն թշնամիք նորա․ փախեան ատելիք նորա յերեսաց նորա :

Ալէլուիայ ճաշու Վարդավառին :

ներ : Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա․ ձայն եղև յամպոյն որ ասէ․ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ :
բշ : Բարձրութիւնք լերանց նորա են , նորա է ծով՝ և նա արար զնա , և զցամաք ձեռք նորա ստեղծին․ եկայք երկրպագեսցուք նմա․ անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ :
դշ : Քո են երկինք և քո է երկիր , զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր․ զհիւսիս և զհարաւ դու արարեր․ թաբոր և հերմոն յանուն քո ցնծասցեն :

Ալէլուիայ ճաշու Վերափոխման , և տապանակին :

ներ : Արի տէր 'ի հանգիստ քո․ դու և տապանակ կտակի սրբութեան քոյ :
բշ : Ուրախ լեր բեր'' :
կտ : Այսօր ծնաւ որ 'ի Հօրն է՛ն :
գշ : Ուրախ լիցին երկինք :

Ալէլուիայ ճաշու նաւակատեաց խաչի և եկեղեցւոյ :

շբ : Սիրեաց տէր զսիոն․ և ընտրեաց բնակել 'ի նմա․ ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից․ 'ի սմա բնակեցայց․ զի հաճեցայ ընդ սա :
ներ : Տուր զօրութիւն ծառայի քոյ․ կեցո զորդի աղախնոյ քոյ․ և արա առիս զնշան բարութեան :
բշ : Նաւուր երկիւղածաց քոց նշան․ զի ապրեսցին յերեսաց աղեղան :
գշ : Տէր սիրեցի զվայելչութի տան քոյ․ և զտեղի յարկի փառաց քոց :
դշ : Տէր 'ի տաճար սուրբ իւրում , տէր յերկինս յաթոռ իւրում :
բշ : Որպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց․ ցանկայ՝ և փափաքէ անձն իմ 'ի գաւիթս քո․ սիրտ իմ , և մարմին իմ ցնծասցէ առ աստուած կենդանի :
ուր : Նաւուր երկիւղածաց քոց նշան․ զի ապրեսցին յերեսաց աղեղան :
շբ : Որպէս փրկեսցին սիրելիք քո , կեցո աջով քո , և լուր մեզ :

Ալէլուիայ ճաշու աւուրց պահոց․ որք առնին բաց յայնոց :

աձ : Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ :
կտ : Վասն անուան քո տէր կեցուսցես զիս․ արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ :
ակ : Տէր՝ մի սրտմտութբ քով յանդիմաներ զիս․ և մի բարկութեամբ քով խրատեր զիս :
բձ : Սիրտ իմ խռովեցաւ յիս , և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ :
բկ : Դարձ տէր և փրկեա զանձն իմ․ կեցո զիս տէր ըստ ողորմութեան քում :
գձ : Վասն անուան քո տէր քաւեա ըզմեղս իմ՝ զի բազում եղեն յոյժ :
գկ : Ողորմեա ինձ տէր , զի հիւանդ եմ ես․ բժշկեա զանձն իմ՝ զի խռովեցան ոսկերք իմ :
դձ : Յիշեա տէր զգթութիս քո և զողորմութիս քո , որք են յաւիտենից :

դկ :

դէ : Տէր ողորմութիւն քոյ յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առներ :

Ալէլուիայ շաբաթապահոց :

ճղ : Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ այ փրկիչ մեր :
գղ : Երգեցէք տն երգ նոր . երգեցէք տն ամ երկիր . երգեցէք տն և բարձր արարէք զանուն նորա :
եղ : Բարձր արարից զնստրեանն 'ի ժողովրդենէ իմմէ . գտի զդաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա :

Ալէլուիայ աղուհացից կիրակէից :

Աղաղակեցէք առ տէր ամ երկիր, ծառայեցէք տն ուրախութեամբ :
Մտէք առաջի նորա ցնծութեամբ . ծանիջիք զի նա է տէր այ մեր :

Ալէլուիայ ճաշու մարտիրոսաց :

աչ : Տէր սիրէ զիրաւունս, և ոչ թէ վայր հարկանէ զսուրբս իւր . այլ յաւիտեան պահէ զնոսա :
կչ : Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է . վերակացու է նց 'ի ժամանակս նեղութեան :
ալ : Պարծեսցին սրբքն փառօք, և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց և բարձր արասցեն զայ բերանօք իւրեանց :
կչ : Լոյս ծագեաց արդարոց . ուղղոց սրտից եղև ուրախութիւն :
ճչ : Պարծեսցին սրբքն փառօք և ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց՝ և բարձր արասցեն զայ բերանօք իւրեանց :
ել : Կարդացին արդարքն առ տէր՝ և տէր լուաւ նոցա . յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա :
գչ : Վասն քո մեռանիմք զօրհանապազ . համարեցաք իբրև զոչխար 'ի զենումն :
գլ : Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են 'ի քեզ . յաւիտեան ցնծասցեն և բնակեսցես դու 'ի նոսա :
տչ : Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին . որպէս զմայրսն լիբանանու բազմասցին :
տլ : Բազում նեղութիւնք են արդարոց յամենայնէ փրկէ զնոսա տէր . և պահէ զամենայն ոսկերս նց . և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ :

Ալէլուիայ ճաշու հրեշտակապետաց :

Ողորմութեամբ տն լի եղև երկիր . և բանիւ տեառն երկինք հաստատեցան . և հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա :

Համօրէն մարգարէից :

Յեկեղեցիս օրհնեցէք զայ և զտէր յաղբերաց իսրայէլի :

Դաւթի և յակոբայ :

Երդուաւ տր դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա . 'ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա :

Ամենայն առաքելոց :

Կացուցես զնոսա իշխանս ընդ ամ երկիր . և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց :
Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա :

Նախահարցն :

Պատմէ զբան իւր յակոբայ . զարդարութի և զիրաւունս իէլի :

Գրիգորի լուսաւորչին :

Համբերելով համբերի տեառն . և նայեցաւ առ իս և լուաւ աղօթից իմոց :

Հայրապետաց և վարդապետաց :

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն . և սուրբք քո ցնծալով ցնծասցեն :

Ճգնաւորաց :

Երանելի են որք բնակեալ են 'ի տան տեառն . յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ :

Կուսանաց :

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ :
Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա և զընկերս նորա տարցին նմա :

Թագաւորաց .

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն . 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ .

Քառասնից՝ և երկուց ծերոց :

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր . և հաներ զմեզ 'ի հանգիստ :

Մեծի հինգշաբաթի :

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան ակն յանդիման նեղչաց իմոց :

# ՀԱՄԱՌՕՏԱԳՈՅՆ ՁԵՒ

# ՀԱՒԱՏՈՅ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ

## Արեւելեան Հերետիկոսներուն կամ Հերձուածողներուն համար :

Ես Ա. Ա. հաստատուն հաւատովք կ՚ընդունիմ և կը դաւանիմ ամենայն և իւրաքանչիւր բաներն որ Հռոմէական սուրբ Եկեղեցւոյ գործածած Հաւատոյ Հանգանակին մէջ կան. այսինքն :

Կը հաւատամ ի մի Աստուած Հայրն ամենակալ, որ ստեղծեց երկինքն ու երկիրը, ամէն երեւելի և աներեւոյթ բաները : Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին միածին, Հօրմէն ծնած յառաջ քան զամենայն յաւիտեանս, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծմէ. ծնած և ոչ թէ ստեղծուած, Հօրն համագոյակից, որով ամէն բան ստեղծուած է, որն որ մեզի մարդկանցս համար և մեր փրկելու համար երկինքէն իջաւ, և մարմնացաւ Հոգւով սրբով Մարիամ կոյսէն և մարդ եղաւ : Նա՝ խաչեցաւ մեզի համար Պոնտիոս Պիղատոսի օրովը. չարչարեցաւ և թաղեցաւ : Եւ երրորդ օրն յարեաւ ըստ Գրոց, և յերկինս վերացաւ, կը նստի Հօրն աջ դին : Եւ դարձեալ պիտի գայ փառօք՝ կենդանեաց և մեռելոց դատաստան ընելու, որուն թագաւորութեանը վախճան պիտի չըլլայ: Կը հաւատամ և ի Հոգին սուրբ, Տէր և կենդանարար, որ Հօրմէն և Որդիէն կը բղխի, որ Հօր և Որդւոյ հետ մէկտեղ կ՚երկրպագուի ու կը փառաւորուի, որ խօսեցաւ մարգարէից բերնովը : Եւ ի մի, սուրբ, կաթողիկէ և առաքելական Եկեղեցի : Կը խոստովանիմ մէկ Մկրտութիւն՝ մեղաց թողութեան համար : Եւ կը սպասեմ մեռելոց յարութեան, և գալի աշխարհքին կենաց. Ամէն :

Կը հաւատամ որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուած է և մարդ, կատարեալ Աստուած և կատարեալ մարդ. թէ Աստուածութիւնը ու մարդկութիւնը՝ անճառելի և անհասանելի միաւորութեամբ՝ Աստուածորդւոյն միակ անձին վրայ մեզի զմի միայն Յիսուս Քրիստոս կացուցած են, և թէ ասոր համար անարատ յղացեալ ամենօրհնեալ Կոյսն է ճշմարտապէս Աստուածածին. թէ նոյն Քրիստոսի վրայ անշփոթ կերպով կան երկու բնութիւն, և երկու բնական կամք, և երկու բնական գործողութիւնք :

Կը հաւատամ որ եօթն են ճշմարտապէս և յատկապէս Նոր Օրինաց Խորհուրդներն որ Քրիստոս Տէրն մեր մարդկային ազգին փրկութեան համար հաստատած է, թէպէտ ասոնց ամէնն ալ՝ ամէն մէկ մարդու հարկաւոր չեն, այսինքն Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Վերջին օծումն, Կարգ և Պսակ, և թէ ասոնք շնորհք կը բաշխեն, և ասոնցմէ Մկրտութիւնը, Դրոշմը ու Կարգը չեն կրնար կրկնուիլ :

Կը հաւատամ որ անխմոր կամ խմորուն ցորենի հացով Քրիստոսի մարմինը կը կատարուի ճշմարտապէս, և միայն մէկ տեսակով ալ՝ բոլոր և ամբողջ Քրիստոս առնուած կ՚ըլլայ :

Կը հաւատամ որ Պսակի կապն անլուծանելի է. և թէպէտ շնութեան կամ հերետիկոսութեան և կամ ուրիշ պատճառներու համար կրնայ ամուսնոց մէջ առ-

գասի և բնակչութեան բաժանում ըլլալ, սակայն այնպիսիններուն չէ օրէն ուրիշ ամուսնութեան անցնիլ :

Կը հաւատամ որ ճշմարտապէս զղջացեալներն՝ եթէ Աստուծոյ սիրոյն մէջ վախճանած ըլլան՝ դեռ գործով ու գոհացուցութեամբ բրած մեղքերնուն հատուցումը ապաշխարութեան արժանաւոր գործերով չըճարած, անոնց հոգիները մահուընէ ետև Քաւարանի պատիժներովը կը մաքրուին, և անոնց այն պատիժներէն թեթևնալու կ'օգնեն կենդանի հաւատացելոց նպաստները, այսինքն Պատարագաց զոհերը, աղօթք և ողորմութիւնք և ուրիշ բարեպաշտական գործեր, զորոնք հաւատացելոց մէջ սովորութիւն եղած է իրարու համար կատարել ըստ Եկեղեցւոյ կարգադրութեանց : Իսկ անոնց որ հոգիները Մկրտութենէ ետքը երբէք մեղքով մը չեն աղտոտուած, նոյնպէս անոնք որ մեղօք աղտոտուելէն ետև՝ մահուընէ յառաջ կամ ետքը մաքրուած են, անմիջապէս երկինք կ'ընդունուին, և դէմյանդիման կը տեսնեն զերրեակ և զմին Աստուած՝ այնպէս ինչպէս որ է, բայց ամէն մէկն իւր արժանաւորութեանը չափով իրարմէ կատարելագոյն եղանակաւ : Իսկ անոնց հոգիքն որ ներգործական մահացու մեղաց կամ լոկ սկզբնական մեղաց մէջ մեռած են՝ իսկոյն ի դժոխս կ'իջնան, բայց անհաւասար պատժովք կը պատժուին :

Կը հաւատամ որ Առաքելական Ս. Աթոռը և Հռոմայ Քահանայապետը բովանդակ աշխարհիս վրայ գլխաւորութիւն ունի, և նոյն Քահանայապետը յաջորդն է Երանելւոյն Պետրոսի Առաքելապետի և ճշմարիտ փոխանորդ Քրիստոսի, ու բոլոր Եկեղեցւոյ գլուխ, և Հայր և Վարդապետ ամէն Քրիստոնէից, և անոր՝ յանձին Երանելւոյն Պետրոսի՝ ի Յիսուսէ Քրիստոսէ Տեառնէ մերմէ լիովի իշխանութիւն յանձնուած է ընդհանուր Եկեղեցին հովուելու, առաջնորդելու և կառավարելու :

Դաւանիլ և այլ ամէն բան՝ որ սրբազան Կանոններն ու Տիեզերական Ժողովները, և մանաւանդ Փլորենտեան, Տրիդենտեան և Վատիկանեան Սիւնհոդոսներն աւանդած, սահմանած և որոշած են մասնաւորապէս Հռոմայ Քահանայապետին գլխաւորութեան և անսխալ վարդապետութեան նկատմամբ, կ'ընդունիմ առանց երկբայութեան և կը դաւանիմ, և միանգամայն ամէն անոնց հակառակները և հերձուածները, և Եկեղեցւոյ դատապարտած հերետիկոսութիւնները ես ալ կը հերքեմ ու կը դատապարտեմ : Այս ճշմարիտ հաւատքը, որմէ դուրս ոչ ոք կրնայ փրկուիլ, և զոր յօժարակամ կը դաւանիմ և ճշմարտապէս կ'ընդունիմ, սոյն այս կ'ուզեմ բոլորովին մինչև կենացս յետին շունչը հաստատ պահել ու դաւանիլ :

Այսպէս ես Ա. Ա. ([illegible]) կը խոստանամ ու կ'երդնում : Այսպէս օգնէ ինծի Աստուած և Ս. Աւետարանս Աստուծոյ: